

վշտացն՝ հեծեծանօք մեռաւ» (14) :

Այնուհետեւ Յակոբ Զուղայեցի հետամուտ կ'ըլլայ ժողովուրդէն նուէրներ հաւաքելու, էջմիածնի մնացեալ պարտքերը վճարելու նպատակաւ :

Չինք շատ կը նեղեն Ռնոփրիոսին պարտատէրերը, որոնք էջմիածնի անուամբ մուրհակ առած էին : Կաթողիկոսը ճարահատ՝ Տփղիս կ'երթայ, յուսարով հոն գրամ ժողովել :

Սանը իմանալով Հայրապետին մեկնումը, կը վախնայ, կարծելով որ Իսպահան պիտի երթայ իր դէմ դանդատելու : Հրաւիրակ մը կը դրկէ Հաթամ Բէկ անուն, աղերսելով որ էջմիածին վերադառնայ : Կաթողիկոսը հրաւիրակը կը վստահեցնէ՝ թէ Տփղիս եկած է սոսկ դրամ հաւաքելու համար, որպէսզի պարտքերը վճարէ : Ժամանակ մը հոն մնալով Յակոբ Զուղայեցի բարերարներ կը դանէ, եւ կը յաջողի մասամբ վճարել պարտքերը (15) :

Տակաւ կը ջանայ փակել նաեւ մնացեալ պարտքերը, համակերպելով Եղիազարի կաթողիկոսական յաւակնութեանց, եւ զգուշանալով անոր դէմ Աթոռի պայքար մղելէ :

(14) Չափարիա, Անդ 89 :

(15) Անդ :